ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Հայտնի է, որ միջնադարը (4–15 դարեր) գիտությունների ու արվեստների զարգացման համար այնքան էլ բարենպաստ ժամանակաշրջան չէր: Թե՛ քրիստոնեությունը, թե՛ մյուս կրոնները, մարդկանց վրա մեծ իշխանություն ունենալով, գիտնականներին պարտադրում էին կորորեն ենթարկվել աշխարհի մասին ոչ գիտական պատկերացումների ձևավորված համակարգին: Գիտնականները ստիպված էին լինում ենթարկվել, թեև լինում էին նաև բացառություններ: Այստեղ ու այնտեղ երևան էին գալիս հզոր ինտելեկտով և բարոյական բարձր որակներով մարդիկ, որոնք իրենց մեջ համարձակություն էին գտնում չենթարկվել իշխող նախապաշարմունքներին, համարձակորեն հետազոտել աշխարհը և լուսավորել մարդկությունը:

Այդպիսի մի երջանիկ բացառություն էր 7–րդ դարի հայ աստղագետ, մաթեմատիկոս, աշխարհագրագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացին (610–685): Շիրակացին ծնվել է Շիրակ գավառի Անենք (կամ Շիրակավան) գյուղում: Նախնական կրթությունն ստանալով տեղի Դարեվանքի դպրոցում, նա շուրջ մեկ տասնամյակ շրջագայում է տարբեր երկրներում, հարստացնում իր գիտելիքների պաշարը և վերադառնում հայրենիք: Հայրենիքում շարունակում է առաջ տանել իր գիտահետազոտական աշխատանքները, զուգահեռաբար զբաղվելով նաև մանկավարժական գործունեությամբ: Նրա հետաքրքրությունների ոլորտը չափազանց լայն էր. մաթեմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն, տոմարագիտություն, փիլիսոփայություն: Գրել է դասագրքեր, որոնցից նրա մաթեմատիկայի դասագիրքը նույնիսկ այսօր իր ժամանակակցությունը չի կորցրել և համարվում է հնագույններից մեկը համաշխարհային մաթեմատիկական գրականության մեջ:

Շիրակացին իր աստղագիտական աշխատանքներում քննել է տիեզերական երևույթների ու մարմինների հետ կապված բազում հարցեր: Նա գիտեր Երկրի գնդաձևության մասին, գիտեր, որ լույսը տարածվում է ձայնի արագությունից ավելի մեծ արագությամբ: Նա պնդում էր, որ լուսինը սեփական լույս չունի և իր լույսն ստանում է Արեգակից: Նա բացատրել է Լուսնի փուլերի առաջացումը, Արեգակի և Լուսնի խավարումները, մակընթացություններն ու տեղատվությունները: Նա համոզված էր, որ չափերով Արեգակն ավելի մեծ է, քան Երկիրն ու Լուսինը և գտնվում է Լուսնից ավելի մեծ հեռավորություն վրա: Բացատրել է Լուսնի և Արևի խավարման երևույթները, իսկ Ծիր կաթինը մեկնաբանել է որպես մանր ու աղոտ լույս ունեցող աստղերի կուտակում:

Բավական լուսավորյալ մարդ լինելով, քննադատել է իր օրերում լայն տարածում ստացած աստղագուշակությունը, ճակատագրապաշտությունն ու կախարդությունը:

Շիրակացին իրականացրել է փոմարագիտական հետաքրքիր հաշվարկներ, համեմատություններ է կատարել հայկական օրացույցի և այլ օրացույցների միջև: Գրել է իր նշանավոր «Աշխարհացույցը», ուր կան արժեքավոր տեղեկություններ պատմական Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ: Ուսումնասիրություններ է կատարել ձայնագիտության բնագավառում, փվել է ձայների ու ձայնաշարերի կազմությանը վերաբերող նոր գաղափարներ:

Շիրակացին մշակել է նաև սեփական փիլիսոփայական համակարգը: Ընդունում էր աշխարհի արարչի գոյությունը, սակայն գտնում էր, որ Աստված ստեղծել է ոչ թե աշխարհն իր բոլոր երևույթներով ու մարմիններով, այլ միայն ողջ գոյավորի հիմքում ընկած չորս տարրերը՝ հողը, ջուրը, կրակը և օդը: Այս չորս տարրերի զանազան-զարմանազան փոխազդեցություններով էլ, ըստ նրա, պայմանավորված է աշխարհի երևույթների ողջ բազմազանությունը: Աշխարհի իմացության մեջ կարևոր նշանակություն է տվել փորձին, մի գաղափար, որ օտար էր նույնիսկ հին հույներին, և պիտի մարդկության սեփականությունը դառնար հազար տարի հետո միայն:

Ահա այսպիսի զարմանալի մարդ: